պատող ընչաքաղց գիշատիչները բիւրաւոր: Սոսկալի դրութիւն, գազանացած բարքեր և այլանդակ ժամանակներ: Ապագայ սերունդը սոսկումով պէտք է յիշէ այս արիւնոտ ժամանակները:

Վերև յիշատակուած պատմական փաստերից երեւում է, շատ տեղերից կայսրանապետները, զօրախմբի պետերը, փոստի կառավարիչների պետերը անդադար դիմում էին ուր հարկն է զօրք ու պաշտպանութիւն ստանալու իրանց և բայց երևութին կարծես բաւարարութիւն չէին ստանում: Այս առերես անբնական երևոյթի բացատրութիւնը մենք գտնում ենք Կովկասի գլխաւոր զինուորական շտաբի պետ գեներալ Ֆերխմանի խնդրի մէջ, որով գեներալը դիմել է Կովկասի Փոխարքայի դիվանատանը, յայտնելով որ հեռագրական գործադուլի պատճառով նշանակած զօրքը ու օգնութիւնը դժուարութիւնների է հանդիպում, ուստի անհրաժեշտ է որ կայսեր հրամանները ուղարկուեն իրանց տեղերն առաւել շուտափոյթ*:

(Կոտուճակով) Քաջբերունի.

* * *

Իմ կեանքի շէմքում մառախուղն ու մութ
Ըստուար, անթափանց շղթայ են կապել.
Ես միշտ անհամբեր, նրանք միշտ անփոյթ
Անյայտն ու հեռուն ինձանից ծածկել.

Դեռ կեանքիս շէմքում դեռ նոր ատատում,
Ո՜վ ձեզ պիտ թաղեմ. գեղեցիկ յուշեր.
Ես լոյսի, յոյսի, արևի կարօտ,
Իսկ առջևումս մայլուած գիշեր.

Հոգիս թև առած, թռչում է վերև.
Ես ձեզ կ'գտնեմ երազանք ու յոյս.
Արդեօք ահ՛, մթին գիշերուայ ետև
Դու թաղնուած կա՞ս ցնորք Արշալոյս։

Ներսէս Թօսունի

* Արշալոյս 1905 Թ. № 72. դեկտեմ. 8.